600.0017.17.03.03

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

17 մարտի 2003 թվականի №17Ա
քաղ.Երևան

## «ՁՈՐԱՀԷԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ա) կետը, 21-րդ հոդվածը, 22-րդ հոդվածի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №1Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը, վեց ամիս ժամկետով, սահմանել 7.952 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 9.542 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,
2. «ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ սահմանված սակագնի հիմքում դրված լրացուցիչ աշխատանքների համար նախատեսված ծախսերը սակագների հետագա վերանայման ժամանակ չեն ընդգրկվելու մաշվածության ու շահույթի հաշվարկման բազայում:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հուլիսի 31-ի «Էլեկտրաէներգետիկայի ոլորտի սակագների մասին» № 53 Ա որոշման 1.7 կետը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2003 թվականի ապրիլի 16-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**

Երևան
17 մարտի 2003թ.
ժամը 17$^{00}$